

# «ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունը հայ ազգի ինքնուրույն հատվածն է, որը միջազգային հարաբերություններում հանդես է գալիս որպես միջազգային իրավունքի անկախ սուբյեկտ:

Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը անկախ պետություններ են, որոնք ազգային անվտանգության, կրթության և մշակույթի ոլորտներում միասնական պետական քաղաքականություն են իրականացնում:

Լեռնային Ղարաքաղի Հանրապետությունը գիտության, տնտեսության և սոցիալական ապահովության ոլորտներում իր քաղաքականությունը իրականացնում է ինքնուրույն:

«Խաղաղություն և զարգացում» կուսակցությունը հետամուտ է միջազգային և ներքին պետական քաղաքականության բոլոր հարցերում ԼՂՀ-ի ազգային զարգացման այս հայեցակարգին:

## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ 2015-2020թթ.

Սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական ցուցանիշները վկայում են, որ ԼՂՀ-ն թերզարգացած երկիր է՝ աշխատանքի արտադրողականության և կյանքի ցածր մակարդակով: Վերջին տաս տարիների ընթացքում սոցիալ-տնտեսական զարգացման հիմնական աղբյուրը եղել է ԼՂՀ-ի արտաքին պարտքը և հայկական սփյուռքի անհատույց օգնությունը:

ԼՂՀ կառավարության քաղաքականության հիմնական խնդիրը 2015-2020թթ. այնպիսի տնտեսական աճի գրանցումն է, որը թույլ կտա պետությանը անցնել զարգացող երկրների շարքը՝ կյանքի միջին մակարդակով, աշխատանքի բարձր արտադրողականությամբ, առանց արտաքին պետական պարտքի զարգանալու ունակությամբ: Դրա համար ՀՆԱ-ն (համախառն ներքին արտադրանքի) ցուցանիշը պետք է աճի 5 անգամ, կապիտալ շինարարության ծավալը՝ 4,9 անգամ, արդյունաբերական արտադրության ծավալը՝ 6,6 անգամ, գյուղատնտեսական արտադրանքի ծավալը՝ 2,5 անգամ, ծառայությունների ոլորտի ծավալը՝ 7,3 անգամ, աշխատանքի արտադրողականության ցուցանիշը՝ 3,3 անգամ:

**ԱՐՑԱՒԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ ՉԱՐԳԱՑՈՂ ԵՐԿՐՆԵՐԻ ՄԻՋԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՄԲ**

Տարեկան ցուցանիշներ	ԼՂՀ այսօր (դոլար)	Չարգացող երկրներ (դոլար)	Անհրաժեշտ աճ (բանի անգամ)
ՀՆԱ	460, 0 մլն.	2 300, 0 մլն.	5
Կապիտալ շինարարություն	123, 0 մլն.	600, 0 մլն.	4.9
Արդյունաբերական արտադրություն	126, 0 մլն.	830, 0 մլն.	6.6
Գյուղատնտեսական արտադրանք	140, 0 մլն.	350, 0 մլն.	2.5
Ծառայությունների ոլորտ	71, 0 մլն.	520, 0 մլն.	7.3
Բնակչության զբաղվածությունը	61 000 շեմ	75 000 շեմ	
ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով	3 090	15 330	5
Աշխատանքի արտադրողականությունը	12 640	41 820	3.3

Նման տնտեսական աճի ապահովման համար պետք է լրացուցիչ մասնավոր ներդրումների ներգրավումը ԼՂՀ տնտեսության մեջ կազմի 750 մլն դոլար: «Խաղաղություն և զարգացում» կուսակցությունը կատարի այն կառավարությանը, որի ծրագիրը կենթադրի սոցիալ-քաղաքական այս խնդրի լուծումը: Եթե Ազգային ժողովի կուսակցություններից ոչ մեկը 2015 թվականին չառաջադրի նման ծրագիր, «Խաղաղություն և զարգացում» կուսակցությունն ինքը կպատրաստի համապատասխան ծրագիր և 2017 թվականի ԼՂՀ նախագահական ընտրություններում հանդես կգա հանրապետության նախագահի իր թեկնածուով:

**«ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՉԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄԸ**

«Խաղաղություն և զարգացում» կուսակցությունը ուսումնասիրել է Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող մյուս կուսակցությունների նախընտրական ծրագրերը և եկել այն եզրահանգման, որ ներկայացված ծրագրերը չեն համապատասխանում հասարակության պահանջներին: Անկախ այն բանից, թե որ քաղաքական կուսակցությունը կհաղթի այս ընտրություններում, ԱԺ մտնելու դեպքում մեր կուսակցության խորհրդարանական խմբակցությունը կօգտագործի մաս չի կազմի: Ազգային ժողովում մենք հանդես կգանք որպես անկախ, ինքնուրույն քաղաքական ուժ:

Մեր խորհրդարանական գործունեությունը կիրականացվի երեք հիմնական ուղղություններով.

- հանրային վերահսկողություն խորհրդարանի գործունեության նկատմամբ,
- օրենսդրական նախաձեռնություններ,
- միջազգային խորհրդարանական գործունեություն:

## **1. Խորհրդարանական գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության սահմանման ոլորտում մեր կուսակցությունը պարտավորվում է.**

- մինչև 2015թ. սեպտեմբեր ամիսը կազմակերպել խորհրդարանական տեղեկատուի ամենամայա հրատարակում՝ առնվազն 500 օրինակ տպաքանակով, ինչպես նաև ստեղծել կայք, որի միջոցով կլուսաբանվի խորհրդարանի, հանձնաժողովների և խմբակցությունների ամենօրյա գործունեությունը,

- 2015 թվականի սեպտեմբերից անցկացնել ամենամայա հասարակական լսումներ՝ արդեն գործող օրենքներում թերությունների բացահայտման, դրանց մշակման և անհրաժեշտ ուղղումներ մտցնելու համար:

- 2015 թվականի սեպտեմբերից, ամեն ամիս, անցկացնել հանդիպումներ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների և ընտրողների հետ՝ տեղում պարզելու այն հրատապ խնդիրները, որոնք պետք է բարձրաձայնվեն խորհրդարանում կամ ներկայացվեն կառավարությանը:

## **2. Օրենսդրական գործունեության բնագավառում մեր կուսակցությունը պարտավորվում է հանդես գալ օրենսդրական նախաձեռնություններով և Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնել հետևյալ օրինագծերը.**

- մինչև 2015 թվականի վերջը ներկայացնել բանկային բարեփոխումների նախագիծ, որը հետագայում թույլ կտա բանկերին բնակչությանը տրամադրել սպառողական և հիպոթեքային վարկեր միայն ազգային արժույթով (ՀՀ դրամով) և կսահմանի նախկինում բնակչությանը արտարժույթով տրամադրված վարկերի վերաձևակերպման ու վերազնահատման կարգը,

- մինչև 2016 թվականի սեպտեմբեր ամիսը ներկայացնել հարկային համակարգի բարեփոխումների նախագիծ, որը կնվազեցնի փոքր և միջին բիզնեսի հարկային բեռը և կպարզեցնի հարկային վարչարարությունը,

- մինչև 2016 թվականը ներկայացնել դատական համակարգի բարեփոխման նախագիծ, որը կամրապնդի դատարանների անկախությունն ու անաչառությունը և կպարզեցնի քաղաքացիական ու վարչարարական գործերով դատավարական գործընթացները:

### **3. Միջազգային խորհրդարանական գործունեության ոլորտում մեր կուսակցությունը պարտավորվում է.**

- մինչև 2015 թվականի սեպտեմբեր ամիսը մշակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև Միութենական պայմանագրի նախագիծ և մինչև 2015 թվականի վերջը այդ պայմանագրի նախագծի հանրային ու միջխորհրդարանական քննարկումներ անցկացնել Արցախում և Հայաստանում,

- մինչև 2015 թվականի վերջը մշակել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և Ադրբեջանի Հանրապետության միջև զինված հակամարտության դադարեցման, խաղաղության հաստատման և համագործակցական հարաբերությունների վերականգնման պայմանագրի նախագիծ, 2016 թվականի ընթացքում այդ պայմանագրի նախագծի հասարակական ու միջխորհրդարանական քննարկումներ անցկացնել Արցախում, Հայաստանում և Ադրբեջանում,

- մինչև 2015 թվականի վերջը ԼՂՀ ազգային ներկայացուցչությունների բացման կամ ընդլայնման նախագիծ ներկայացնել այն պետություններում, որտեղ կառավարման պետական մարմինները (Աբխազիա, Հարավային Օսիա) կամ դաշնային սուբյեկտների կառավարման մարմինները (ԱՄՆ, Ավստրալիա) ընդունել են ԼՂՀ անկախության միջազգային ճանաչման անհրաժեշտության հռչակագրեր, անմիջականորեն նպաստել այդ ծրագրի իրականացմանը 2016-2017թթ. ընթացքում,

Հարգելի՛ ընտրող

Մեր նախընտրական ծրագրում մենք ներառել ենք պետական շինարարության միայն հիմնական խնդիրները, որոնց շուտափույթ լուծումը, մեր կարծիքով, անհրաժեշտ է տարածաշրջանում խաղաղության հաստատման և մեր երկրում կայուն զարգացման պայմաններ ստեղծելու համար: Իհարկե, պետականաշինության մեր ծրագիրը ավելի ընդգրկուն է և ներառում է մեր ժողովրդի քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացման բոլոր դրույթները:

Մեր հիմնական պարտավորությունը ընտրողների առջև յուրաքանչյուր քաղաքացու ներգրավումն է մեր պետության կառավարման գործում: Այդ իսկ պատճառով մենք պարտավորվում ենք ուսումնասիրել և քննարկել մեր երկրում պետական կառավարման բարելավմանն ուղղված ցանկացած առաջարկություն և ընտրողին հետաքրքրող ցանկացած հարց քննարկման առարկա դարձնել խորհրդարանում և կառավարությունում: